

Ֆինանսական օգնության ծրագրերի ամփոփում

Dignity Health-ի Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ նկարագրված են ֆինանսական օգնության ծրագրերը, որոնք հասանելի են չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդների համար, որոնք բավարարում են որոշակի պահանջներն ըստ եկամտի՝ Dignity Health-ի կողմից ստացած անհրաժեշտ բժշկական ծառայությունների համար վճարելու համար: Չապահովագրված հիվանդը դա այն անձն է, որը չունի բժշկական ապահովագրություն՝ չի օգտվում մասնավոր ապահովագրությունից կամ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրից, և որն իրավունք չունի փոխհատուցում ստանալու հիվանդանոցային հաշվի համար: Ոչ բավարար ապահովագրություն ունեցող հիվանդը, դա այն անձն է, որն ունի բժշկական ապահովագրություն, սակայն ունի բարձր հիվանդանոցային հաշիվներ, որոնք մասամբ փոխհատուցվում են ապահովագրական ընկերության կողմից:

Անվճար խնամք՝

• Եթե դուք չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի կազմում է մինչև 250%, դուք կարող եք անհատույց հիվանդանոցային ծառայությունները ստանալու իրավունք ունենալ:

Զեղչված խնամք

• Եթե դուք չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան տարեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի կազմում է 250-350%, ապա դուք կարող եք իրավունք ունենալ ձեր հիվանդանոցային ծառայությունների հաշիվները նվազեցնել մինչև այն առավել մեծ հիմնավորված գումարը, որը կարող է վճարվել պետության կողմից, որը սովորաբար վճարվում է Medicare-ի կողմից նմանատիպ ծառայությունների համար:

• Եթե դուք չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան տարեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի կազմում է 350-500%, ապա դուք կարող եք իրավունք ունենալ ձեր հիվանդանոցային ծառայությունների հաշիվները նվազեցնել մինչև կանոնավոր հավաքագրվող գումարը (Amount Generally Billed)՝ Դաշնային օրենքով սահմանված գումար, որն արտացոլում է այն գումարը, որը փոխանցվում է հիվանդանոց մասնավոր ապահովագրական ընկերություններից և Medicare-ից (ներառյալ համավճարները և չփոխհատուցվող նվազեցման գումարները) անհրաժեշտ բժշկական ծառայությունների համար:

Եթե դուք մեր Ֆինանսական օգնության քաղաքականության ներքո ֆինանսական օգնություն ստանալու իրավունք ունեք, ապա դուք պարտավորված չեք լինելու վճարել ավելին, քան ստորև նկարագրված կանոնավոր հավաքագրվող գումարը (Amount Generally Billed): Որակավորվելու դեպքում դուք կարող եք նաև առանց տոկոսագումարի ընդլայնված վճարման պլանի համար դիմել:

Դուք երբևիցե պարտավորված չեք լինելու կանխավճար կատարել կամ այլ վճարային մեխանիզմներից օգտվել՝ շտապ օգնություն ստանալու համար: Հիվանդանոցի Ֆինանսական օգնության քաղաքականության և ֆինանսական օգնության հայտածների անվճար պատճենները հասանելի են

հիվանդանոցի ստորև նշված վեբ կայքում կամ մուտքի մոտ գտնվող ընդունման կետերում: (Հետևեք “Admitting” ընդունման կետ, կամ “Registration” գրանցման կետ, նշաններին): Այդ փաստաթղթերի պատճեններն ըստ պահանջի կարող են նաև փոստով ուղարկվել ձեզ, եթե զանգահարեք ձեր հիվանդանոցի Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին ստորև նշված հեռախոսահամարով:

Traducción disponible: Այդ փաստաթղթերը կարող եք նաև ձեր բերել իսպանական և այլ լեզուներով ձեր հիվանդանոցի վեբ կայքում, հիվանդանոցի ընդունման կետում կամ զանգահարելով հիվանդանոցի հեռախոսահամարով:

Dignity Health-ի Ֆինանսական խորհրդատուները կարող են պատասխանել ձեր հարցերին, տրամադրել տեղեկատվություն մեր ֆինանսական օգնության քաղաքականության մասին և օգնել ձեր ֆինանսական օգնության համար դիմելու գործընթացին: Մեր աշխատակազմը գտնվում է հիվանդանոցի ընդունման կետում, որտեղ կարող եք զանգահարել նաև ստորև նշված հեռախոսահամարով:

California Hospital Medical Center 1401 South Grand Ave, Los Angeles, CA 90015
Ֆինանսական խորհրդատվության բաժին 213-742-5530 | **Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին** 888-488-7667
www.dignityhealth.org/californiahospital/paymenthelp

Community Hospital of San Bernardino 1805 Medical Center Dr, San Bernardino, CA 92411
Ֆինանսական խորհրդատվության բաժին 909-806-1317 | **Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին** 909-806-1281
www.dignityhealth.org/san-bernardino/paymenthelp

Glendale Memorial Hospital 1420 South Central Ave, Glendale, CA 91204
Ֆինանսական խորհրդատվության բաժին 818-502-2305 | **Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին** 888-488-7667
www.dignityhealth.org/glendalememorial/paymenthelp

Northridge Hospital Medical Center 18300 Roscoe Blvd, Northridge, CA 91328
Ֆինանսական խորհրդատվության բաժին 818-885-5368 | **Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին** 888-488-7667
www.dignityhealth.org/northridgehospital/paymenthelp

St. Bernardine Medical Center 2101 N. Waterman Ave, San Bernardino, CA 92404
Ֆինանսական խորհրդատվության բաժին 909-883-8711 ext 4408
Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին 909-881-4418 | www.dignityhealth.org/stbernardinemedical/paymenthelp

St. Mary Medical Center 1050 Linden Ave, Long Beach, CA 90813 | **Ֆինանսական խորհրդատվության բաժին** 562-491-7078
Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին 888-488-7667 | www.dignityhealth.org/stmarymedical/paymenthelp